

**Հ Ո Ղ Ա Ս Մ Ա Ս Ի Ն Վ Ի Ր Ա Տ Վ ՈՒԹՅ ՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼ ՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Պարույրի Սահակյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2016 թվականի հոկտեմբերի 3-ին N 13574 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ընդունել Սամվել Պարույրի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գայի փողոց 1-ին նրբանցք 22 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18102016-08-0033 վկայական) հողամասի նվիրատվությունը:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել Գյումրի համայնքի միջոցների հաշվին (պատասխանատու՝ աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):

**Ռ.ՍԱՆՈՅԱՆ**

**Ռ. ԱՍՍՏԻՅԱՆ**

**Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Ա. ՀԱԿՈԲՅԱՆ**

**Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Կատարող՝  
Ա.Հակոբյան

**«ՀՈՂԱՄԱՍԻ ՆՎԻՐԱՏ ՎՈՒԹՅ ՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼ ՈՒ ՄԱՍԻՆ»  
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Մամվել Պարույրի Սահակյանին սեփականություն իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գայի փողոց 1-ին նրբանցք 22 հասցեյի հողամասը գտնվում է խիտ և անկանոն կառուցապատված տարածքում: Հողամասը չի կապված երթևեկելի ցանցի հետև չունի մոտեցման և սպասարկման հնարավորություն: Հողամասի դիրքը, չափերը և ձևը դարձնում են այն կառուցապատման համար չնպատակահարմար:

Հողամասը երկար տարիներ Ս. Սահակյանի կողմից չի օգտագործվել, չի խնամվել և փաստացի դարձել է անօգտագործելի լքված տարածք: Խնամքի բացակայությունն իր հերթին բերել է տարածքի տարերային բնույթի և հողաշերտի դեգրադացիայի, որը բացասական կերպով է ազդում թաղամասի և անիտարա-հիգիենիկ պայմանների վրա:

Նշված խնդիրները սեփականու ժերով կարգավորելու հնարավորություն չունենալու պատճառով Ս.Սահակյանը հողամասը նվիրում է Գյումրու համայնքին:

Որոշման ընդունմամբ համայնքը ստանում է հողամասն իր կարիքներին համար օգտագործելու և տեղում բարեկարգ իրավիճակ ստեղծելու հնարավորություն:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«ՀՈՂԱՄԱՍԻ ՆՎԻՐԱՏ ՎՈՒԹՅ ՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼ ՈՒ ՄԱՍԻՆ»  
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑ ՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏ ՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ  
ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հողամասի նվիրատվություն ընդունելու մասին» որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ ավելացումներ կամ նվազեցումներ, չեն նախատեսվում: